



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

31 մարտի 2021 թվականի թիվ 47-Ա

ք. Երևան

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՂԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերով և Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի հոկտեմբերի 5-ի «Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման մրցույթն անցկացնելու նպատակով ժամանակավոր մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը սահմանելու մասին» թիվ 120-Ա որոշմամբ և հիմք ընդունելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2021 թվականի մարտի 29-ի թիվ 46-Լ արձանագրային որոշմամբ մրցութային հանձնաժողովի կազմում ընդգրկված թվով 5 թեկնածուներից ստացված համաձայնությունը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Հաստատել Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրման ժամանակավոր մրցութային հանձնաժողովը՝ հետևյալ կազմով.

1. Տեր Բագրատ Էպիսկոպոս Գալստանյան
2. Արա Երնջակյան
3. Դավիթ Մուրադյան
4. Մարգարիտա Մնացականյան
5. Կամո Հովհաննիսյան:

2. Սույն որոշմամբ ձևավորված մրցութային հանձնաժողովի անդամները պաշտոնավարում են մինչև Հանրային հեռարձակողի խորհրդի անդամի թափուր տեղի համալրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ՕՀԱՆՅԱՆ

31 մարտի 2021թ.

ք. Երևան